1700-ԱՄՅԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ. ՏՐԴԱՏԻ ԱՆՏԱՌ

Վերջին ամիսներին ծրագիր է մշակվում Խոր Վիրապի շրջապատում 17.000 ծառերի անտառ տնկելու՝ ի փառավորումն 1700-ամյակի տոնակատարությունների: Այս հարցի բազմակողմանի քննարկման համար 1700-ամյակի գործադիր վարչության և մի քանի պատասխանատու անձերի հետ սույն թվականի մայիսի 19-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ խորհրդակցական ժողով, որին մասնակցեցին 1700-ամյակի գրասենյակի գործադիր վարիչ-քարտուղար Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը, Գործադիր մարմնի անդամներ Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանը, Գրիգոր Խանջյանը, ինչպես նաև Խոր Վիրապի վանահայր Տ. Մխիթար քհն. Սարիբեկյանը, Պատմական հուշարձանների պահպանության հայկական ընկերության նախագահ պրոֆ. Վարազդատ Հարությունյանը, Հայաստանի պատմական և մշակութային հուշարձանների պահպանման և օգտագործման վարչության պետ պրոֆ. Կորյուն Ղաֆադարյանը, Հնագիտության և ազգագրության գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն պրոֆ. Արամ Քալանթարյանը, նույն ինստիտուտի բաժնի վարիչ Ժորես Խաչատրյանը, «Հայանտառի» գլխավոր տնօրենի տեղակալ Ռուբեն Պետրոսյանը և Ամերիկայի Հայկական համագումարի Հայաստանի «Ծառատունկ» ծրագրի կառավարիչ Արթուր Հայրումյանը:

Ժողովի նախագահ Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը Վեհափառ Հայրապետի անունից ողջունեց ներկաներին և ծանոթացրեց Խոր Վիրապի շրջակայքում Տրդատ թագավորի անունով անտառ տնկելու ծրագրին: Ժողովը մանրամասն քննարկեց առաջարկված ծրագիրը: Եվ քանի որ այդ նույն տարածքում, որտեղ նախատեսվում է անտառ տնկել, գտնվում է Հայաստանի պատմական մայրաքաղաք Արտաշատը, կարծիքների փոխանակությունից հետո հանձնաժողովը որոշեց մինչև հուլիսի 31-ը ներկայացնել մի նախագիծ՝ նշված այն տարածքներով, ուր հնարավոր է տնկումներ կատարել, և որը չի վնասի Արտաշատ մայրաքաղաքի հետագա պեղումներին ու պատմամշակութային առումով նրա պահպանմանը: Վերջնական արդյունքներից հետո ծրագրեր կմշակվեն Խոր Վիրապի կանաչապատման և շրջակայքում գեղեցիկ ու հանգստավետ պուրակներ ստեղծելու համար:

ԴԻՎԱՆ 1700-ԱՄՅԱԿԻ